# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի հ. 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների, պատմության (14 դասաժամ), ՆԶՊ-ի (6 դասաժամ) և տեխնոլոգիայի (8,5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

-ՆԶՊ և անվտանգ գործունեություն առարկայի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի հավակնորդը պետք է ունենա բարձրագույն կրթություն, սպայական կոչում:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. դեկտեմբերի 29-ից մինչեւ 2024թ. հունվար 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունվարի 17-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 13 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Կապան, Ձորք թաղամաս թիվ 3: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-37-20 հեռախոսահամարով: